


Ձեր ժամանակացույցը և արտաժամյա պահանջները



**Նոր տեղեկատվական տեսահոլովակ՝
ժամանակացույցեր, արտաժամյա և ճամփորդության
ժամանակի համար վճարում**

Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժանմունքը (California Department of Social Services, CDSS) ուրախ է հայտարարել, որ այժմ մատչելի է կարճ, սակայն շատ տեղեկատվական տեսահոլովակ, որը ձեզ լրացուցիչ մանրամասներ կտրամադրի Կալիֆորնիայի նահանգային օրենսդրության նոր փոփոխությունների մասին, որոնք այժմ պահանջում են, որ Տնային աջակցության ծառայությունների (IHSS) մատակարարողները վճարվեն արտաժամյա և ճամփորդության ժամանակի համար՝ որոշ պայմանների ու հատուկ սահմանափակումների ներքո: Երբ այս սահմանափակումներն անտեսվում են, IHSS մատակարարողները կարող են խախտում ստանալ իր հետևանքներով:



Խնդրում ենք մի քանի րոպե տրամադրել և դիտել այս տեսահոլովակը հետևյալ հղումով՝
<http://www.cdss.ca.gov/agedblinddisabled/PG3154.htm>.

Մենք շատ խրախուսում ենք ձեզ օգտվել այս հնարավորությունից և դիտել տեսահոլովակը, որպեսզի պարզեք, թե ինչպես կարող են այս փոփոխություններն ազդել ձեզ վրա:

Ձեր ժամանակացույցը և արտաժամյա պահանջները

Ուսուցում

Այժմ ձեզ համար ուսուցում է մատչելի, որպեսզի մանրամասնորեն տեղեկանաք այս նոր փոփոխությունների մասին: Դիմեք ձեր տեղային վարչաշրջանի IHSS գրասենյակ, IHSS Հանրային իշխանություն կամ միավորման ներկայացուցչին մանրամասները պարզելու համար: Ի լրումն տեսահոլովակի և ուսուցման, հետևյալ խորհուրդներն ընդգծում են այն կարևոր տեղեկությունը, որը պետք է հիշել, որպեսզի խուսափեք վճարման հետաձգումներից ու խախտումներից:



Անել և Չանել



- Իրավասու մատակարարողները կարող են ճամփորդել միայն 7 ժամ յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ընթացքում:
- Եվ ստացողները, և մատակարարողները պետք է հասկանան ժամերի փոփոխության վարչաշրջանի հաստատման գործընթացը:
- Մատակարարողները չպետք է աշխատեն իրենց նշանակված ընդհանուր առավելագույն շաբաթական ժամերից ավել:
- Մատակարարողները, որոնք աշխատում են մեկից ավել ստացողի համար, չեն կարող աշխատել ընդհանուր 66 ժամից ավել յուրաքանչյուր աշխատանքային շաբաթվա ընթացքում:

Ժամանակացույցի լրացման խորհուրդներ

Ժամանակացույցը լրացնելիս մատակարարողների համար կարևոր է հիշել այս օգտակար խորհուրդները.

1. Օգտագործեք միայն **սև** թանաք և ուժեղ սելֆեք:
2. Եվ ստացողը, և մատակարարողը պետք է ստորագրեն ու ամսագրեն ժամանակացույցի հետևում:
3. Կտրեք կետագծի երկայնքով:
4. Ժամանակացույցը մի ծալեք:
5. Մի գրեք արդեն տպված տեքստ պարունակող վանդակներում:
6. Ժամանակացույցում գրեք միայն ժամերն ու րոպեները յուրաքանչյուր աշխատած օրվա համար:
7. Մի ծրարում ուղարկեք միայն մեկ ժամանակացույց:
8. Ծրարի վրա ճիշտ նամականիշ տեղադրեք:

Important Instructions

2. Your defined workweek is from Sunday 12:00 AM to Saturday 11:59 PM.
3. Do not send any other documents with the timesheet.
4. Only write in the hours, minutes, signature, and date boxes. Do not write in any box with a preprinted 0. Any extra writing on the timesheet can delay your paycheck.
5. You will not be paid for hours claimed more than the recipient's IHSS Program authorized hours (as shown in the "hours" field below) or the weekly allowed hours. Claiming extra hours can delay your paycheck.
6. You must enter hours for each day worked (Total line is optional).
7. You and your Recipient must sign and date the back of your timesheet.
8. Do not fold the timesheet. Do not use white-out or correction tape on timesheet.
9. Claimed = hours worked and claimed in previous pay period.

Provider #:	00000000	Provider Name:	LASTNAME, FIRST
Case #:	43 01 000000	Recipient Name:	LASTNAME, FIRST
Type:	IHSS	Timesheet No.:	4000050153
Pay From:	07/01/2015	Pay To:	07/15/2015
		Hours:	52:30

	Workweek #1	Workweek #2	Workweek #3	Workweek #4
Claimed:	00:00	00:00	00:00	00:00

S	0	0	0	0	S 05				S 12				S	0	0	0	0
M	0	0	0	0	M 06				M 13				M	0	0	0	0
T	0	0	0	0	T 07				T 14				T	0	0	0	0
W 01					W 08				W 15				W	0	0	0	0
T 02					T 09				T 00	0	0	0	T	0	0	0	0
F 03					F 10				F 00	0	0	0	F	0	0	0	0
S 04					S 11				S 00	0	0	0	S	0	0	0	0

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ձեր տեղային վարչաշրջանի IHSS գրասենյակ կամ IHSS Հանրային իշխանություն, կամ այցելեք Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների բաժանմունքի Չափահասների ծրագրերի բաժնի կայքէջը՝ <http://www.cdss.ca.gov/agedblinddisabled/PG1296.htm>.